ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Արարատի մարզի, Քաղցրաշենի
համայնքապետարան

N 61
11 մայիս 2018թ.

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԱՄԱՅԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Կից ներկայացվում է Քաղցրաշեն համայնքի ավագանու թիվ 16, 17, 18 որոշումների կրկնօրինակները:

Առդիր 6 էջ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱԼԵՐԻԿ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

Կատ. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Վ. Արարատյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Քաղցրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Քաղցրաշեն համայնք

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 16

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 05.05.2018Թ ԹԻՎ 6 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Քաղցրաշեն համայնքի ավագանու թիվ 6 նիստի օրակարգը

1.ՀՀ Արարատի մարզի Քաղցրաշեն համայնքի պարզեցված գլխավոր հատակագծում փոփոխություններ կատարելու նախագիծը հաստատելու և հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

2. Քաղցրաշեն համայնքի 2018թ-ի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱԿՈԲՅԱՆ ԱԶԻԶ կողմ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ կողմ
3. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԵՈՆԻԴ կողմ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ԻՇԽԱՆ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՐԻԿ կողմ
6. ՖԱԽՈՒՐՅԱՆ ԱՐՏՈՒՇ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱԼԵՐԻԿ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Քաղցրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Քաղցրաշեն, ,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 17

ՀՀ ԱՐԱՐՐԱՏԻ ՄԱՐԶ ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ և ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ կետով, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ սահմանված կարգով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2018 թ-ի թիվ 50 դրական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին.

ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել ՀՀ Արարատի մարզի Քաղցրաշեն համայնքի պարզեցված գլխավոր հատակագծում փոփոխություններ կատարելու նախագիծը համաձայն հավելվածի:

2.Պարզեցված գլխավոր հատակագծով սահմանված՝ հողամասերի նպատակային և (կամ) գործառնական նշանակությունները համարել փոփոխված <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ կետի 5-րդ մասի պահանջի ապահովման պայմանով:

3. Ճյուղային և համայնքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել պարզեցված գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան

միջոցառումներն՝ ըստ սահմանված հերթականության և <<Քաղաքաշինության մասին>> հհ օրենքի 14--դ հոդվածի 3-րդ կետի 14-րդ և 30-րդ մասերին համապատասխան հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում և արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱԿՈԲՅԱՆ ԱԶԻԶ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
3. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԵՈՆԻԴ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ԻՇԽԱՆ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՐԻԿ
6. ՖԱԽՈՒՐՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱԼԵՐԻԿ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Արարատի մարզի Քաղցրաշեն համայնքի ավագանու
<< 05 >> մայիս 2018 թ. N 17 որոշման

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ (ԿԱՄ) ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հողամասի N գծագրի վրա	Առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Մակերեսը (հա)	Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և (կամ) գործառնական նշանակությունը	Մակերեսը (հա)
1	2	3	4	5
Պետական սեփականություն հանդիսացող հողամասերից				
	Գյուղատնտեսական նշանակության հողերից՝	19.37975		
			Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	19.37975
03-097-0562-0004	արոտավայրեր	5.07222	ընդերքի օգտագործման համար տրամադրված	5.07222
03-097-0562-0006	արոտավայրեր	9.66246	ընդերքի օգտագործման համար տրամադրված	9.66246
03-097-0562-0008	արոտավայրեր	3.91544	ընդերքի օգտագործման համար տրամադրված	3.91544
03-097-0566-0002	այլ հողատեսքեր	0.04540	ընդերքի օգտագործման համար տրամադրված	0.04540
03-097-0566-0003	այլ հողատեսքեր	0.67483	ընդերքի օգտագործման համար տրամադրված	0.67483
03-097-1425-0002	այլ հողատեսքեր	0.00940	ընդերքի օգտագործման համար տրամադրված	0.00940

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. ԱՐԱՐԱՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Քաղցրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Քաղցրաշեն համայնք

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
05 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 18

ՔԱՂՑՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2018Թ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Քաղցրաշեն համայնքի 2018թ բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Վարչական բյուջե

ա) Վարչական բյուջեի 05.01.0151 (աղբահանություն և սանմաքրում) գծ. դասակարգման 4215 (ապահովագրություն) հոդվածից 40000 դրամ տեղափոխել 01.01.0151 գծ. դասակարգման (կառավարման մարմնի պահպանում) 4215 հոդվածին ծառայողական ավտոմեքենայի ապահովագրման համար:

բ) Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 11.01.02.51 գծ. դասակարգման 4891 հոդվածից 995000 դրամ հատկացնել 04.05.0158 (մայրուղիների և փողոցների վերակառուցում) գծ. դասակարգման 4251 (ընթացիկ նորոգումներ) հոդվածին Ստ. Շահումյան փողոցի հարթեցման աշխատանքների համար, իսկ 1150000 դրամ տեղափոխել 04.02.01.55 գյուղատնտեսական կենդանիների պատվաստում 4111(աշխատավարձ) հոդվածին անասնաբույժի աշխատավարձի վճարման համար:

2. Ֆոնդային բյուջե

ա) Ֆոնդային բյուջեի 09.08.01.55 կրթություն (այլ դասակարգման չպատկանող) գծ. դասակարգման 5112 (շենք և շինությունների կառուցում) հոդվածից կատարել հատկացումներ 80000 դրամի չափով նույն դասակարգման 5113 (շենք և շինությունների կապիտալ նորոգում) հոդվածին մանկապարտեզի պարսպի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ֆինանսավորման համար, իսկ 30000 դրամ տեղափոխել 04.05.0158 (մայրուղիների և փողոցների վերակառուցում) 5134

(նախագծահետազոտական ծախսեր) հոդվածին Ստ. Շահումյան փողոցի հարթեցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների համար:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱԿՈԲՅԱՆ ԱԶԻԶ կողմ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ կողմ
3. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԵՈՆԻԴ կողմ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ԻՇԽԱՆ կողմ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱՐԻԿ կողմ
6. ՖԱԽՈՒՐՅԱՆ ԱՐՏՈՒՇ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱԼԵՐԻԿ ԳՅՈՒԼԱՍԱՐՅԱՆ